Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 6

ք. Երևան, 26 նոյեմբերի 2022 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Ա. Հարությունյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Դանիելյան– ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)
Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)
Ա. Առուշանյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական
Ս. Սահակյան - Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետի պարտականությունները կատարող (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Ավետիսյան – Տեսչական մարմնի ղեկավար
Ն. Հայրապետյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Գ. Սարոյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Շատվորյան - Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Մ. Երիցյան – Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ
Ա. Բաբայան – «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրեն
Ա. Հակոբյան – Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարող

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է և ներկայացրեց օրակարգը:

Ա. Դանիելյանն առաջարկեց որպես օրակարգային հարց ընդգրկել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանի մոտ տեղի ունեցած քննարկման արդյունքները, որի հիման վրա ծառայողականի վերաբերյալ հարցը:

Ա. Հարությունյանը կարևորեց դրանց քննարկումը:

Խորհրդի անդամների բոլոր կողմ ձայներով ընդունվեց առաջարկությունը, Նախագահը ներկայացրեց նոր օրակարգը՝ ըստ հարցերի հերթականությամբ և առաջարկեց քվեարկել:

Օրակարգը հաստատվեց միաձայն՝ 7 կողմ ձայներով:

1. Խորհրդի անդամ Մելինե Բեգլարյանի անդամությունը դադարեցնելու վերաբերյալ

(Գ. Ավետիսյան, Վ. Քերոբյան)

Նախարարն առաջարկեց Գ. Ավետիսյանին պարզաբանել Մ. Բեգլարյանի Խորհրդի անդամությունից հրաժարվելու պատճառը, և հետաքրքրվեց, թե կան արդյոք համալրման առաջարկներ:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ Մ. Բեգլարյանն էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է իր զբաղվածության պատճառով խորհրդի անդամությունը դադարեցնելու վերաբերյալ: Նա հավելեց, որ խորհրդի համալրման նպատակով ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից պետք է մրցույթ հայտարարվի, և թեկնածուն ընտրվի ոլորտում առավել ակտիվ գործունեություն ծավալող գիտական կենտրոններից:

Խորհրդի՝ նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝

Դադարեցնել Մելինե Բեգլարյանի անդամությունը և ընտրել Խորհրդի նոր անդամ:

Նախարարի առաջարկությամբ՝ օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը քննարկվեցին միաժամանակ:

2. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

(Գ. Ավետիսյան, Գ. Սարոյան, Կ. Չիլինգարյան, Ա. Առաքելյան, Մ. Սանդոյան, Ա. Խոջոյան, Ա. Դանիելյան, Ա. Արուշանյան, Վ. Քերոբյան, Ա. Հարությունյան)

3. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

(Գ. Ավետիսյան, Գ. Սարոյան, Կ. Չիլինգարյան, Ա. Առաքելյան, Մ. Սանդոյան, Ա. Խոջոյան, Ա. Դանիելյան, Ա. Արուշանյան, Վ. Քերոբյան, Ա. Հարությունյան)

Գ. Ավետիսյանը մանրամասնորեն ներկայացրեց Տեսչական մարմնի գործունեությունն, ըստ ոլորտների, խոսեց առկա ռեսուրսների, հետագա անելիքների, ինչպես նաև ոլորտում արձանագրված օրենսդրական բացերի և իրավական կարգավորումների անհրաժեշտության մասին:

Գ. Ավետիսյանը մանրամասն ներկայացրեց նաև Տեսչական մարմնի 2023 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:

Կ. Չիլինգարյանի հարցին, թե սահմանային պետական վերահսկողության որ փուլում են մասնակցում փորձաքննություն իրականացնող լաբորատորիաները, Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ ներմուծվող սննդամթերքի նկատմամբ սահմանային վերահսկողության շրջանակներում ցածր ռիսկայնությամբ բեռների դեպքում իրականացվում է փաստաթղթերի զննում, բարձր ռիսկայնությամբ բեռների դեպքում՝

հաշվի է առնվում շրջանակային համաձայնագիրը, կատարվում է նմուշառում և փորձանմուշների հանձնում 3 լաբորատորիաներից մեկը:

Ա. Դանիելյանի դիտարկմամբ, ստուգումների ծրագիրը պետք է կազմել ըստ օրենքի՝ բազայից, բոլոր չափանիշներով, սակայն կան կազմման որոշ անհամապատասխանություններ, դասակարգումը թերի է, մասնավորապես, այն ցուցանիշները, որոնցով որոշվում է ռիսկայնությունը, ամբողջությամբ հաշվի առնված չեն, և դրանք համակարգային հարցեր են: Ծրագրում ներառվածների մոտավորապես կեսը պետք է չլիներին: Ծրագրի նկատմամբ փաստացի վստահություն չկա:

Ա. Արուշանյանը նշեց, որ բազայի միջից որոշ տողեր ջնջված են, և վերջնական ցուցակում կոնկրետ տնտեսավարողներ չեն ներառվել, միաժամանակ, կան այնպիսիք, որոնք ներառվել են, սակայն գործունեությունը ժամանակավոր դադարարեցրած են, լուծարված են, կամ կազմակերպաիրավական վիճակները այլ են: Խնդրեց պարզաբանել 1 աշխատակցին ընկնող ստուգումների մասով համամասնությունը տարածքային կենտրոններում: Տարբեր տարածքային կենտրոններում տարբեր կերպ է բաշխվել:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ բազան թարմացվում է, իսկ մեթոդաբանության մասով՝ ներառված են այն տնտեսավարողները, որոնք երբևէ չեն ստուգվել: Ռիսկայնության գործող համակարգը սննդամթերքին չպետք է վերաբերվեր, այնուամենայնիվ, 2023 թվականի ծրագիրը կազմելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ շատ տնտեսավարողներ ստուգումներից դուրս են մնում: Լուրջ խնդիրներ կան այստեղ, բարձր ռիսկայիններից շատերը դուրս են մնում և փաստորեն երբեք չեն ստուգվում:

Ա. Դանիելյանը նշեց, որ դրա համար կան ցուցանիշներ, որոնք պետք է հաշվի առնել՝ շրջանառություն և այլն:

Կոնկրետ օրինակներով Գ. Ավետիսյանը փաստեց, որ կան դեպքեր, երբ իսկապես բարձր ռիսկային տնտեսավարողը դուրս է մնում ծրագրից, դա կանխելու համար է այս մոտեցումը:

Ներկայացնելով Տեսչական մարմին իր այցի նպատակը՝ Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ վերջին շրջանում տեսչական մարմինների համակարգման գրասենյակում քննարկվում են տեսչական մարմինների համակարգման գրասենյակին և տեսչական մարմիններին առնչվող հարցերը և բացահայտել են լրջագույն խնդիրներ, քննարկումներ են անում, որպեսզի գտնեն լուծումներ:

Զեկույցների շրջանակում Ա. Հարությունյանը Տեսչական մարմնի ղեկավարին ուղղեց հետևյալ հարցերը՝

1) որքանով է հավանական, որ ծրագիրը կազմելիս ինքը Տեսչական մարմնի ղեկավարի հետ եկել է հանցավոր համաձայնության, ինչի արդյունքում կոնկրետ տնտեսավարող ցուցակից դուրս է մնացել,

2) որքանով է հավանական, որ իրենց պաշտոնավարման ամբողջ ընթացում նույն տնտեսավարողները դուրս կմնան ցուցակից,

3) ոլորտի օրենսդրական խնդիրները երբ է արձանագրել, ինչու այդ ուղղությամբ աշխատանք չի տարվել, արդյոք դրանք կառավարության միջոցառումների ծրագրում տեղ գտել են և ինչ ժամանակացույցով:

Ա. Հարությունյանի դիտարկմամբ, արձանագրվում է մի փաստ, որ լսում ենք խնդիրների մասին, որոնք արդիական են, խոչընդոտում են աշխատանքը,կասկածի տակ են դնում տեսչական մարմնի աշխատանքը, բայց դրանց լուծումները կարող են լինել, օրինակ, 2026 թվականին: Ինչ լուծումներ է փորձել տալ ղեկավարը:

Շնորհակալություն հայտնելով հարցերի համար, Գ. Ավետիսյանը նշեց,որ կսկսի պատասխանել վերջին հարցից՝ խնդիրներն արձանագրել է պաշտոնավարման առաջին իսկ օրվանից, ռիսկերի գնահատման գործող համակարգն այլ ոլորտների

համար կարող է լինել բավարար, նիստերին խոսել է, սակայն սննդամթերքի անվտանգության ոլորտում իրական գիտական մոտեցում է անհրաժեշտ, որոնք հաշվարկները ճիշտ կատարելու հնարավորություն կտան, որից հետո էլեկտրոնային համակարգի ներդրման անհրաժեշտություն կլինի, որպեսզի մարդկային գործոնը բացառվի: Հենց սա էլ տանում է հանցավոր համաձայնության մասին հարցի պատասխանին :Այն կարող է լինել այս ռիսկայնության համակարգի կիրառման պարագայում: Շեշտեց, որ պետք է ռիսկի գնահատման իրական գործիք: Այս համատեքստում որոշ կազմակերպություններ դուրս են մնում, որովհետև ժամանակին նման մոտեցում է եղել: Չեն ստուգվել, ռիսկը չի բարձրացել:

Օրենսդրական բացերի մասին մշտապես բարձրաձայնվել է ՀՀ վարչապետին, տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացված հաշվետվություններում, առանձին գրություններով և աշխատանքային քննարկումներում, ինչպես նաև նման փաթեթներ քննարկվել են նաև խորհրդի նիստերի ժամանակ: Նոր չէ, որ անդրադարձ է կատարվում այս հարցերին և չի կարող ասել երբ կներառվեն կառավարության ծրագրում:

Ա. Խոջոյանը խոսեց Տեսչական մարմնի կողմից ներկայացված 25 կետից կազմված առաջարկությունների հիման վրա ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականի մասին՝ շեշտելով, որ քննարկվող օրենսդրական բացերը նշված չեն եղել փաստաթղթում: Իսկ առաջարկությունների մեջ ներառված խնդիրներից շատերը արդեն լուծված են, շատերը վերաբերվել են տեխնիկական կանոնակարգերի համապատասխանեցմանը կամ օրենքներում փոփոխություն կատարելուն, շատերը լուծման փուլում են, համապատասխան նախագծերը շրջանառվում են:

Ա. Հարությունյանը ուշադրություն հրավիրեց քննարկման ժամանակ վեր հանված այնպիսի բացերի վրա, ինչպիսիք են օրինակ, թունաքիմիկատների խնդիրները:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, այդ մասով առաջարկ չի արվել, քանի որ թունաքիմիկատների բնագավառում առկա խնդիրների մասին երբևէ չի բարձրաձայնվել որևէ տնտեսավարողի կողմից, անգամ նրանց հետ կազմակերպված հանդիպումների ժամանակ: Թունաքիմիկատների գրանցումը կատարվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2010 թվականի հրամանով հաստատված ցանկի ձևաչափով: Միայն ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Ավետիսյանի կողմից ուսումնասիրության, նրա հետ քննարկումներից հետո իրազեկ է եղել ոլորտում առկա անհամապատասխանություններին: Ըստ Ա. Ավետիսյանի, կան գրանցված անվանումներ, որոնք արտադրվում են օրինակ Գերմանիայում, Հոլանդիայում, բայց այդ անվան տակ հայտնվում են Չինաստանում և այլ երկրներում: Նշանակվել է ծառայողական քննություն՝ հասկանալու համար թե ինչու մինչև հիմա դա չի բացահայտվել: Արձանագրված խնդիրներին լուծում կտրվի 3 ուղղություններով: Թունաքիմիկատը ներմուծման ժամանակահատվածում փաստաթղթավորման ստուգում է անցնում, իսկ հրամանի համաձայն արտադրող երկիրը նշելու պահանջ չի եղել: Հրամանի փոփոխությամբ՝ արտադրման երկիրը և արտադրողը նշելու պահանջ կդրվի, ինչի արդյունքում հնարավոր կլինի կանխել խնդիրը:

Մ. Սանդոյանը խոսեց ստուգումներն ավելի ընդլայնելու, բարելավելու անհրաժեշտության մասին՝ նկատելով, որ ներկայացվող ծրագով 1 տնտեսավարողին բաժին է ընկնում 4 օր: Չեն ցանկանում արդյոք քայլեր անել այս ուղղությամբ: Երկրորդ դիտարկումը կապված է բազայի հետ, թե ինչ սկզբունքով են ընկերությունները հայտնվում բազայում, ինչու կան կրկնաստուգումներ, ժամանակացույցից շեղումներ: Նա բերեց օրինակ, որ ընդգրկվել է ժամացույցների ներմուծմամբ զբաղվող ընկերությունը, որքանով է դա առնչվում Տեսչական մարմնին:

Գ. Ավետիսյանը նշեց, որ մարզերում մարդկանց ծանրաբեռնվածությունն ավելի մեծ է, կապված տեսուչների քանակի հետ:

Ա. Արուշանյանը հավելեց, որ ընդգրկող տարածքի և կենտրոնացվող ուժերի միջև բաշխվածության անհամապատասխանություն կա:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ ինքն այդ վերլուծությունը չունի: Տվյալ տարածքում տնտեսավարողի քանակից ելնելով է կազմվել: Ռիսկի հաշվարկի մասով խոսքը փոխանցեց Գ. Սարոյանին:

Գ. Սարոյանը պարզաբանեց, որ ցածր ռիսկայնությամբ տնտեսավարողները հայտնվել են ցուցակում թեժ գծով բողոքի հիման վրա, քանի որ նաև իրացում են կատարել: Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիման վրա՝ և ոլորտային, և անհատական ռիսկերը: Հիմնականում ներառվել են այն ընկերությունները, որոնք նախկինում չեն ստուգվել: Նախորդ տարվա ցանկի հետ թվով 65 տնտեսավարողի կրկնությունը բացատրեց ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ, սնունդ մատակարարող ընկերություններ են, նախկինում թունավորումների և ահազանգերի առկայությամբ, որոնք համարվել են ռիսկային: Ինչ վերաբերում է տեսուչ-մարզային տարածք բաշխվածությանը, նա նշեց, որ բացի պլանային ստուգումներից, Տեսչական մարմինը կիրառում է նաև օրենքով նախատեսված՝ դիտարկում և մշտադիտարկում գործիքները, ինչը նույնպես մարդկային ռեսուրս է պահանջում, քանի որ ընդհանուր առմամբ ստուգվում են 1600-1700 տնտեսություն: Եթե խորհրդի կողմից կլինի հանձնարարական թիվը ավելացնել, կարվի դա համամասնությունը պահպանելով: Հավելեց նաև, որ Մ. Սանդոյանի կողմից նշված կազմակերպությունը կարող է զբաղվել հանրային սննդի մատուցման ծառայությամբ:

Ա. Առաքելյանի հնչեցրած հարցին, թե ըստ մարզերի, ստուգվող օբյեկտներ-տարածք արդյոք նույն համամասնությունն է գործում, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ օբյեկտների քանակը մայրաքաղաքում ավելի շատ է:

Ա. Առաքելյանն առաջարկեց դիմել Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող գիտահետազետական ինստիտուտների օգնությանը՝ մոնիթորինգի հետ կապված հարցերով, օգտվել պետական պատվերով նպատակային դրամաշնորհային ծրագրերից: Առաջարկեց դիտարկել Բուսաբանության, կենդանաբանության ինստիտուտները, էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ այս տարի կնքվել է հուշագիր ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

Վ. Քերոբյանը նշեց, որ ծրագրում թվայնացման մասին չի հիշատակվում, թեև խորհրդի նախկին նիստերում երկար քննարկում է ունեցել այդ հարցի շուրջ, եղել են առաջարկություններ: Նա կարևորեց թունավորման դեպքերի նվազեցմանն ուղղված քայլերը և թվայնացման գործիքի կիրառումը, մասնավորապես՝ ՎՎՀԿԿ համակարգի բաղադրիչների մասին տնտեսավարողի կողմից բազայում համապատասխան տեղեկատվությունը ներմուծելը, որն առաջին ստուգումից հետո վերահսկելի կդարձնի դրանք: Օրինակ՝ աշխատակիցների սանիտարական գրքույկների տրման ամսաթվերը ներմուծելով՝ հնարավոր կլինի վերահսկել դրանց ժամկետները, ՎՎՀԿԿ համակարգի ներդրման և սերտիֆիկացման պարտադիր պահանջ սահմանելու հնարավորությունները, արդյունավետությունը: Առաջարկվել է հետագայում օգտվել տեղեկատվական այնպիսի բազաների հնարավորություններից, ինչպիսիք են Armed-ը, Պետական եկամուտների կոմիտեի և Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների բազաները:

Գ. Ավետիսյանը հայտնեց, որ թվայնացման ծրագիրը մեկնարկել է: 2022 թվականին կատարվել է անասնաբուժական և բուսասանիտարական սերտիֆիկատների թվայնացում և մոտարկում Ռուսաստանի Դաշնության համապատասխան համակարգի հետ: 2023 թվականին նախատեսվում է էլեկտրոնային ստուգաթերթեր, ստուգումների անցկացում պլանշետների միջոցով, ռեեստրների թվայնացում: Ծրագրի պլատֆորմը կա: ՎՎՀԿԿ համակարգի ներդրումը վերաբերում է արտադրությանը, իսկ Տեսչական մարմինն առաջարկում է այն ներդնել նաև ռեստորաններում: Միաժամանակ ներկայացրեց թվայնացման վերաբերյալ Խորհրդին նախկինում տրամադրված առաջարկությունները:

Նախարարի հարցին, թե կա արդյոք իրազեկման բյուջե, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ համագործակցում են դոնոր կազմակերպությունների հետ՝ ռազմավարության համապատասխան քայլեր անելու նպատակով, օրինակ՝ իրազեկման հոլովակներ տարբեր տարիքային խմբերի մարդկանց համար:

Մանրամասն քննարկվեց սպանդանոցում կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման մթերքի նկատմամբ իրականացվող պետական վերահսկողությունը, արձանագրված բացերը և ներկայացված օրենսդրական առաջարկությունները:

Վերադառնալով Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրին՝ Նախարարը նշեց հետևյալ դիտողությունները.

ա) ծրագրի 3-րդ գլխում ներկայացվում է, որ անհրաժեշտ են մարդկային ռեսուրսներ: Առաջարկեց վերանայել՝ նշելով, որ Տեսչական մարմնին անհրաժեշտ են թվայնացման գործիքներ:

բ) ծրագրի մեջ անհրաժեշտ է հստակ նշել սպանդանոցների և թունաքիմիկատների վերաբերյալ՝ արտացոլված արդյունքային ցուցանիշներով:

Կիրառման ճիշտ գործիքակազմ է պետք, որպեսզի սպանդանոցային միսը ուրիշ ճանապարհով չգնա:

գ) լրամշակել ծրագիրը՝ ներառելով սպանդանոցների և թունաքիմիկատների թեմաները:

Ներկայացված առաջարկությունների հիման վրա Խորհրդի՝ նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝ հանձնարարել Գ.Ավետիսյանին՝

1. Լրամշակել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը՝ հետագա վերանայման պայմանով:

2. Լրամշակել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

3. Լրամշակված նախագծերը, ինչպես նաև Օրակարգում ներառված 4-6-րդ և 8-9-րդ հարցերը ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ